

2. Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության գանձապետարանի վարկավորումը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից

2.1 Ելնելով, մինչև 1998թ հունվարի 1-ը ՀՀ կառավարությանը տրամադրված վարկերի վերաձևակերպման անհրաժեշտությունից:

1998թ հունվարի 1-ի վարկային գծի մնացորդի դիմաց Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը տրամադրում է 9.0 մլրդ դրամ անվանական արժեքով պետական արժեկտրոնային արժեթղթեր 1-5 տարի ժամկետայնությամբ և տարեկան 20-25% եկամտաբերությամբ, որի ընթացակարգը պետք է համապատասխանի 1997թ հոկտեմբերի 2-ին և դեկտեմբերի 16-ին հաստատված " ՀՀ կենտրոնական բանկի կողմից ՀՀ կառավարությանը նախկինում տրամադրված վարկային գծի դիմաց արժեկտրոնային պարտատոմսերի թողարկման և տրամադրման հիմնական պայմաններին" փաստաթղթի պահանջներին: Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությանը իրավունք է վերապահվում ետ գնել վերոհիշյալ արժեթղթերը ՀՀ կենտրոնական բանկից:

2.2 ՀՀ կառավարության դեպոզիտների դիմաց վճարվում են տոկոսներ, եթե Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի և Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության միջև կնքված է ավանդային պայմանագիր:

2.3 Յուրաքանչյուր եռամսյակից 10 օր առաջ Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը ՀՀ կենտրոնական բանկին է ներկայացնում եռամսյակի ընթացքում ՀՀ պետբյուջեի եկամուտների և ծախսերի կանխատեսումը, ինչպես նաև դեֆիցիտի ֆինանսավորման ակնկալվող աղբյուրները:

2.4 ՀՀ կենտրոնական բանկից ակնկալվող բյուջեի ֆինանսավորման դեպքում Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը արժեթղթեր է թողարկում, որին զուգահեռ ՀՀ կենտրոնական բանկը գնում է դրանք արժեթղթերի երկրորդային շուկայից կամ ապահովում դրանց տեղաբաշխման համար բավարար պայմաններ:

2.5 Սույն պայմանագրի 2.4 կետում նշված մեխանիզմին Հայաստանի Հանրապետության ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կամ ՀՀ կենտրոնական բանկի կողմից անհամաձայնության դեպքում գործում է "ՀՀ կենտրոնական բանկի մասին" Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածով նախատեսված դրույթները, ըստ որի կնքվում են դիսկրետ վարկային պայմանագրեր:

2.6 Սույն պայմանագիրը կարող է վերանայվել կողմերից մեկի գրավոր առաջարկության դեպքում:

Զ. Գրիգորյան

Վ. Կարամյան
06.02.98թ.

06.02.98թ.